

ՄԱՐՏԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատուցանի խանութում

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լիզուռով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՂԱՆԻՊԱՆՈՒԹԻՒՆ

Տիֆլիսի հիւանդութեան տարածվելը... Ներքին տեսութիւն: Նիսիս Անդրէկովսկու սպանման գործը, Նամակ խմբագրին: Արտաքին տեսութիւն: Ամերիկա: Արտաքին լուրեր: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական: Մագօի Օղան:

ՏԻՖ ԼԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՎԵԼԸ

Տիֆլ, ինչպէս տեսնում ենք ինքներս թիֆլիսում և տեղեկանում ենք զանազան քաղաքներից մեզ հասած լուրերից, հետզհետէ տարածվում է ոչ թէ միայն ամբողջ Արևմտում, այլ և Բալկանեան թերակղզու վրա, այսինքն այնպիսի տեղեր, որոնք կամ պատերազմական բեմ են եղել, կամ փոքր ի շատէ մօտ են գտնվել այն տեղերին, որտեղ պատերազմ է եղել:

Առհասարակ վարակիւղ հիւանդութիւնների, ինչպէս ժանտախտի, տիֆի, խոլերայի և սոցա

նման ցաւերի տարածվելուն նպաստում են ոչ թէ միայն մտքի կենտրոնի միմեանց մէջ յարաբերութիւնները և օդը, բայց և ջուրը, որ անցնում է այն տեղերից, որտեղ վարակիւղ հիւանդութիւն կայ: Հատ անգամ զօրքերի մի տեղից միւս տեղ տեղափոխվելը, մարդկերանց միմեանց հետ ունեցած յարակցութիւնը, օդը և այլն, այնքան ներգործութիւն չունեն մի ցաւ տարածելու համար, որքան ջրի հոսանքը:

Վարակիւղ հիւանդութիւնները գրեթէ միշտ պատահում են պատերազմից յետոյ, մանաւանդ այնպիսի պատերազմից յետոյ, որի ժամանակ զիակները օրինաւոր կերպով չեն թաղում, կամ միջոցներ չեն գործ ածում, որ զիակների գարշահոտութիւնները, օդը ապականող մասնները, առհասարակ բոլոր փաստակար հիւթերը ոչնչանան:

Պատերազմի զլխաւոր հոգսե-

րից մինն էլ այն է, որ սպանված մարդիկ միակ զօհներ լինեն պատերազմի, որ դրանց զիակների թունաւոր հիւթերը չը փաստեն կենդանի մնացածներին և այդ նպատակով պատերազմի ժամանակ, երբ զիակները թաղում են, զանազան միջոցներ են գործ ածում նրանց մէջ եղած թունաւոր հիւթերը, նրանց փտելու հետեւանքները ոչնչացնելու համար:

Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ հազարաւոր զիակներ ծածկեցին Ֆրանսիայի դաշտերը: Այդ պատերազմի հետեւանքները պէտք է վարակիւղ հիւանդութիւններ լինէին, բայց շատ աննշան էր հիւանդացողների պրոցէսը Ֆրանսիայում և Գերմանիայում: Ի՞նչ էր սրա պատճառը:

Պատճառը այն էր, որ երկու պատերազմի կողմերն էլ առանձին ուշադրութիւն էին դարձրել զիակների թաղելու վրա: Այդքա մարմինները անփաստ անելու հա-

մար գործ էին ածում կիր, նաւթ և այլ այրվող նիւթեր, որոնք ոչնչացնում էին զիակների թունաւոր հիւթերը:

Այս վերջին պատերազմի ժամանակ վերցրած Արդահան բերդը, ինչպէս յայտնի է, երկու պատերազմի կողմերից էլ ահագին բանակութեամբ զօհեր խլեց: Այդ բերդը շինած էր Աուր գետի երկու ափերին, այնպէս որ գետը անցնում է քաղաքի մէջ: Հազարաւոր մարդկերանց զիակներ Աուր գետի երկու ափերին թէպէտ թաղված են, ծածկված են հողով և կրով, բայց այնու ամենայնիւ կիրը բաւական չէ, որ ոչնչացնէ բոլոր այն փաստակար հիւթերը, որոնց ջրի հոսանքը կը տանի իր ընթացքի վրա գտնվող գիւղերը և քաղաքները և կը տարածի վարակիւղ հիւանդութիւնը: Մանաւանդ հիւանդութիւնները սաստիկ կը տարածվեն գարունից, երբ սարերի վրա ձիւնը կը

ՄԱՂՈՒ ՕՂԱՆ

II

Մագօի օղան միայն չէր այդտեղ, կային և ուրիշները. բայց նրանք թողած էին և ոչ ոք այնտեղ չէր բնակվում: Քարերը դարձած միմեանց վրա չորս կողմից պատեր են կազմում, առաստաղը երկգնդին է շինած և նրա վրա հող է ածած, Այս է բոլոր շինութիւնը: Մագօի օղան միւս օղաների մէջ տեղն էր գտնվում, որի չորս կողմը առանց առաստաղի քառանկիւնի պատեր էին դարձած: այդտեղ անասուններն են մնում քորդերի անագին չնեի նկողութեան տակ:

Իր օղայի կարին կանգնած, լուսաւորված լուսնի արծաթեայ ճառագայթով, ընդունեց մեզ քորդ Մագօն, այդ միջնադարեան նկայասպիտը: Նա ձեռքին ուներ իր դազանակը, քորդի այդ անբաժան գէնը, որով դրանք պատերազմում են մինչև անգամ զինաւորված մարդու հետ: Այդ անարդուն նայելիս հիանալ կարելի էր նրա գէնի արտայայտութեան վրա. մարմնի կազմվածքը, հագուստը, կոպիտ ձայնը ցոյց էին տալի, որ դա բնութեան որդի է, այն հովիւներից մէկը, որոնց նկարագրութիւնը կարգում ենք Աստուածաշունչ գրքում: Երբ նա մեզ տեսաւ, խիզոն հրաւրեց, խիզոն հասկացաւ, որ հիւրեր են եկել և առանց հարցնելու, թէ մենք ով ենք, ինչ ազգութեան ենք պատկանում, նա առաջարկեց մեզ իր բնակարանը:

- Համեցէք, աչքիս վրա, ասաց նա հայերէն, ձեզ Աստուած ինձ դոնաղա զարկել:
- Իմ ընկերներն են, ասաց Մամսօնը, որսի դուրս եկանք մթնեց բերի քեզ մօտ դոնաղ: Մամսօնը Մագօի հին բարեկամն էր:
- Հատ լաւ ես արել, խալֆա Մամսօն: Համեցէք...
- Աղա, գէլ և Մամսօն, էն Աստուծը գէլ և,

ասաց Միսօնը ցոյց տալով դէպի տարածվող դաշտը: Ընդ տես, ուղում ա ռիչար տանի կերթում կը խփեմ:

— Աղա, սուս արա, այ քոր շուն, բիբուր արիւր մեզ, մի շուն էլ ըստեղ կը սպանես:

— Գէ, դու ես գիտում: Մագօն կտորից մեզ մտցրեց իր օղան: Մի ծակ, որից մի մարդ կարող է ներս սողալ, այդ օղայի ճանապարհն էր: Միւս կողմից օղան մի փոքր դուռն ուներ, բայց նա նշանակած էր անասունների և կանանց համար:

Օղայի մի մասում անասուններ էին գտնվում, նոր ծնող ոչխարներ և գառներ, միւս մասում փոքր վառարան, որի շուրջը ուրախ կրակի մօտ մենք շարվեցանք: Օղը սաստիկ ծանր էր, այնպէս որ հազիւ էինք շունչ քաշում:

Օղայի մէջ գտնվողները բոլորը քորդեր էին, բացի մէկ հայ քանաքէնցի, որը Մամսօնի հարցին, թէ այստեղ ինչ է չինում, պատասխանեց, որ Մագօից միշտ ոչխարներ է գնում և նրա հետ զանազան հաշիւներ ունէ, որոնց պատճառով շուտ շուտ այցելում է այս տեղը: Մագօն հաստատեց նրա ասածը, միայն տանտիրոջ քորդը չորաններից մէկը մի կասկածաւոր հայեացք ձգեց քանաքէնցու վրա և սկսեց վառվող կրակը խառնել:

Մեր խորջինը բացվեց ու շուտով փայտեայ շամփուրների վրա շարած խորովածները սկսեցին խչրելալ կրակի վրա:

Ամենքս լաւ տրամադրված էինք: Մագօն խօսում էր Միսօնի հետ նոր օրէնքների վրա, որոնցից Միսօնը տեղեկութիւն ուներ: Մամսօնը հանաքներ էր անում, Տարիէլը գինի էր ածում և քիթի տակ երգում էր վրացերէն՝

- Ձմեռն ինչ կուզէ ցորտ ըլլ
- Եարի եարալի,
- Թէ ախաւն էլ սառիլ և ըլլ
- Թարի եարալի,
- Յօրբը մեղի չի վախեցնի
- Թէ զլինեբուս տաք ըլլ,
- Եւ ցոյց տալով իբր թէ ծածուկ է անում, տկի բերանը իր բերնին էր կցցնում...
- Երբ բաւական մտանք կեր ու խումի մէջ էրը

զինին տաքացրեց զլուխներս, էլ մեզ հետ խօսել չէր կարելի:

— Հիմալ նանս երազներ ա տեսնում: Տեսնում ա, որ նրա Մամսօնը եպիսկոպոսի աջն առել ա, օրհնութիւնը ստացել ու առօք փառօք բերում ա քաղաք, ասում էր Մամսօնը: Հայ գիղի, նանի, թէ մին կիմանաս, որ անառակ որդիդ հրմի էս շուրուը բարոսարանութիւն ա անըմ, յետոյ երգում էր՝

- Այս ինչ քաղցր բան
- Ըլլալ կոնծաբան,
- Այս ինչ դառը բան
- Ըլլալ կարտաբան
- Ո՞հ ինչ աղւոր բան
- Ըլլալ սիրական,
- Ո՞հ ինչ դառը բան
- Կին ունենալ տան.

Քանաքէնցին մասնակցում էր մեր քեֆին: Դա մի գեղեցիկ առուով տղամարդ էր: Մագօն առաջարկեց նրան ածել չորանի շիլի վրա և քանաքէնցին սկսեց իր փայտեայ գործիքով հովիւների բոլոր եղանակները շփանդել: Ամենքը ուշադրութեամբ լսում էին, եղանակները շատ գեղեցիկ էին: Նրանց մէջ երևում էր մէկ վայրենի ներդաշնակութիւն, որ այդքան սիրելի է ասիացի մարդուն...

— Ո՞րտեղից է սովորել այս քանաքէնցին, միթէ իր հայրենի համար Մագօի օղան այցելելով, նա սովորեց և հովիւ շիլին ածել, մտածում էի ես, երբ ետևիս նստած Տարիէլը երկու երեք անգամ բռնեց մէջքիս:

— Ի՞նչ ես ուղում, հարցրի ես:

— Նայիր, ասաց նա, զլխով ցոյց տալով դէպի օղայի մութ անկիւնը: Երկու փայտեայ աչքեր երևում էին մութ անկիւնում: Ես երբէք չեմ մտածաւ այդ աչքերը, որոնք սաստիկ կրքոտ արտայայտութիւն ունէին: Այդպիսի աչքեր անուանվում են իւզուտ աչքեր, այն մտքով, որ ինչպէս իւղը շուտով բոբրեցվում է, վառվում է, այնպէս էլ այդ տեսակ աչքերը, որոնք շատ քիչ են պատահում և որոնց առաջ տղամարդը խնամարկեցնում է իր հակացքը: Մարմնի մէջ մի տեսակ ցնցուն զգայով...

— Ո՞վ է հարցրի ես ճառայեցաւ:

— Աղջիկ է... Հենց դա սկսեց շիլի ածելնա երեւաց:

— Բայց ինչ գիտես, որ աղջիկ է:

— Գիտեմ, ես տեսայ երբ նա մտաւ: Հենց քանաքէնցին սկսեց ածել նա էլ մտաւ: Քանաքէնցին շարունակում էր շուտացնել ածելի ուղտոված: Մագօի քորդը հովիւը անհանգիստ էր լինում: Նա վերկայաւ և ուղտովեց դէպի մութ անկիւնը, որտեղից խիզոն աչքերը անհետացան և մէկը շատով տանից դուրս գնաց:

Քանաքէնցին և քորդը հովիւը միմեանց շատ բարեկամաբար չէին նայում...

— Այստեղ բօման կայ, մտածեցի ես: Աղջիկ է երևում քանաքէնցու երածշտութիւնը լսելու, քորդը հովիւը քանաքէնցուն թշնամական հայեացքներ է գցում, գնում է աղջկայ կողմը, որը փախչում է: Այս բօման կայ, վճռեցի ես մտքումս և սկսեցի մտածել, թէ ինչպէս տեղեկանամ հանգամանքներին...

— Աղա, քուստ տանրմա, մեր տղերք, ասաց Մամսօնը, երբ արդէն բաւական երկրպագութիւն էր մատուցել բարոսին, քննեք ո՞չ:

Ընկերներս օղայի մէջ պատեկեցին, որովհետեւ դուրսը ցուրտ էր: Ես աւելի լաւ համարեցի ցըրտում քննել, քան թէ օղայի մէջ, որովհետեւ ծանր օղը և զանազան միջատները ինձ անհանգստացնում էին: Քանաքէնցին մնաւ բարեկամաբար Նա պէտք է առաւօտը մեղանից շուտ գնար...

III

Քորդի կարկետի մէջ փաթակված պատկած էի օղայի կտորը, բայց քուստ չէր տանում, քանաքէնցին և երկու փայտեայ սեղանները ինձ հանդուրժեցին չէին տալիս, Բօման կայապատեղ, մտածում էի և ինքս էլ չը գիտէի: Թէ ինչ եմ այդպէս կարծում: Քորդը հովիւը կատաղութիւնը կարող էր երևակայական լինել, աղջկայ օղա մտնելը պատահական...

— Տարիէլ, էն աղջիկը ինչի եկաւ օղան:

— Քանաքէնցուն սիրում է, պատասխանեց Տարիէլը:

— Ի՞նչ գիտես:

Հայրենիք, երբ անձրևները ջրերը անցնելով դաշտերից իրանց հետ կը բերեն և կը թափեն Կուր գետը ամեն տեսակ անմաքրութիւններ:

Կովկասի ասենիզացիայի յանձնաժողովին են յանձնած այն հոգսերը, որ նա պէտք է տանի մեր երկիրը առողջացնելու համար: Այդ հոգսերից մինն էլ մեր կարծիքով պէտք է լինի Արդասան բերդի տակ գտնված դիակների անվնաս անելը: Այս խնդրի վրա դարձնում ենք յանձնաժողովին ուշադրութիւնը: Եթէ ոչ, շուտով ամբողջ թիֆլիս քաղաքը ստիպված կը լինի խմել ջրի հետ Արդասանի ահագին գերեզմանատան մէջ փտող մարմիններից գոյացած և Կուր գետի հոսանքով բերած թունաւոր հիւթերը:

Իսկ ինչ սարսափելի հետևանքներ կունենայ մեզ համար այդ տեսակ երևոյթ, —ինքն իրան հասկանալի է:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻՆԱ ԱՆԿԻՆԵՎՍԿԱՅԻՆ ՍՊԱՆՍՄԱՆ ԳՈՐԾԸ

Հարցերը որոշեցին, կատարածները մասամբ փարատվեցին: Մեղադրական թէ պաշտպանողական կողմերը ըմբռնեցին, ամեն մէկը իրանց համար, որոշել նպատակ, առաջինը

- Գիտեմ, հաստատ դիտեմ:
- Բա, ինչպէս անենք սօ, որ իմանանք բանը ինչուսն է:
- Գու ջնիր, ես չեմ ջնիր, դուրս կը դան կը խօսեն, կիմանամ:
- Թէ դոչադ ես, Տարիէլ Ղան, թէ իմ լօթի Տարիէլն ես, իմացիր, փող կը բախշեմ:
- Կիմանամ, փողն ինչ եմ անում, դու փող չես:
- Գէ լաւ:
- Մենք էլի երկար խօսում էինք: Ես կարծում էի, որ ես և Տարիէլը մենակ էինք, չը հաշտելով ի հարկէ Տօպիկն, որ ոտքերիս մօտ կօրոված երազներ էր տեսնում: Բայց վերջը դուրս եկաւ որ Մադօն էլ քանաքէպու հետ դուրսն էր:
- Մադօ ախպէր, դեռ չես ջնիր:
- Քննել չեմ, բարեկամիս հետ հաշտ եմք անում, պրծանք:
- Լաւ գիշեր ա:
- Հա լաւ գիշեր է... է Մադօ, — մի բան հարցնեմ, ամօթ չը լի:
- Ասա ինչ ա:
- Էսքան ոչխար ունես, հարուստ ես, որդի էլ ունես:
- Զէ տղայ չունեմ, ին ա ամօթ: Մին լաւ աղջիկ ունեմ, տղից լաւ: Շատ բաժինք են տալի, որ Զօրախ մարդի տամ, տալիս չեմ:
- Երեկ շատ փոքր է:
- Ղարափաշը տասնը հինգ տարեկան ա: Մենք թէ՛ մարդի կը տանք, ամա ես ուզում չեմ: Բարի գիշեր, ասաց նա և մտաւ նեղ ծակից օդայի մէջ:
- Տանն և հինգ տարեկան աղջիկ, սիրուն աչքեր և քանաքէպու տղայ, որ շատ լաւ շլի է անում, ինչ կայ դարմանալու, որ այդ երկուսը սիրում լինեն միմեանց...
- Այսպէս տրամադրված են ջնեցի:
- Գեռ լուսնի ճառագայթը նոր էր իր տեղը արևի լուսին թողնում, հեռու, սարերի մէջ նոր էին սկսել իրանց կրքը արտառնելը, կարաւները սկսել էին իջնել դաշտը կերակրի համար, երբ շլիի ձայնը ինձ դարձեցրեց: Այդ քանաքէպուն էր անում — գնալով դէպի սարը:
- Տարիէլը և շունն չը կային:
- Օղայի պատի մօտ դրսից կանգնած էր Զօրան

մեղադրական կէտից, միւսը — պաշտպանողական:

Առաջին խօսքը պատկանում էր մեղադրական — իրաւունքին, որի ներկայացուցիցն էր պրօկուրորի օգնական պ. Խօյրօփօկին:

Մենք կը բերենք այստեղ նրա ասածը, համարեա բոլորովին ճշտութեամբ, թէէլ, խոստովանում ենք, որ նրա երիտասարդական, կրակոտ, բայց միշտ խոհեմ ձևակերպված և արագ արտասանութեան ոճը, հազիւ թէ կարող էր մանրամասնութեամբ արտասայտել ճեղքադրութիւնն անգամ:

Պարոններ, սկսում է մեղադրական իրաւունքի ներկայացուցիչ պ. Խօյրօփօկին, 22-ին յուլիսի 1876 թ-ին թիֆլիսում պատահեց այնպիսի մէկ խորհրդաւոր անցք, որը մնաց հասարակութեան կարծիքի համար անհասկանալի, անբացատրելի... Այդ անցքի վրա դարձրեց իր ուշադրութիւնը տեղական տպագրութիւնը (պրեսան), այդ անցքով հետաքրքրվեցին բոլոր թիֆլիսի բնակիչները, հետաքրքրվեց անգամ ամբողջ Անդրկովկասեան ժողովուրդը:

Զը նայելով որ այդ անցքից յետոյ անցաւ բաւական ժամանակ, հասարակութիւնը միակերպ հետաքրքրված է նրանով և նրա վերադարձը խիղճը բաւականութիւն է պահանջում ձեռնարկ պ. պ. դատաւորները կը լինի ձեր վճիռը իրաւացի թէ սխալ, հասարակութիւնը պիտի բաւականանայ նրանով: Ուրեմն նորից յիշեցնելու համար անցքի ընթացքը այնքան որ նա պարզվեց այստեղ դատարանում վիաների բացատրութիւնից, ես կարծարտ ձևով կը պատմեմ այդ անցքի զիջաւոր պատմութիւնը:

Այդ սարսափելի անցքից մէկ 9 թէ 10 օր առաջ Անդրէկովկասի մայր և աղջիկ տեղափոխվում են Վերօպաս հիւրանոցից տիկին Ներվալիձէի տունը, որտեղ դրանց գնալուց առաջ ընտելվելու է եղել իրանց փեսայ իշխան Ներվալիձէն, որտեղից պիտի շուտով հեռանային ժամանակով Օրէսա, որ այնտեղ վերջացնելուց

և նայում էր հեռացող քանաքէպուն: Գրա գեղեցկութեան նմանը ես կհանրուս չէի տեսել: Զէի իմանում ինչի հետ համեմատեմ նրա դէմքը, երեսի նուրբ գծադրութիւնը մի հակապատկեր էր ներկայացնում նրա աչքերի վայրենի փայլմունքին: Մարմնի ամբողջ կազմվածքը մի խառնուրդ էր փափկութեան և կոպտութեան: Մազոտ յոնքերը խառնվում էին թերթերունքների հետ:

Քանաքէպուն դադարեցրեց շլի ածելը, յետ դարձաւ, բարձրացրեց գլխարկը և խաղաղեց օդում: Զօրան էլ պատի մօտ բարձրացրեց ձեռքը և նրանով մի քանի պտոյտների արաւ: Ես փաթակից կարգադրեմ մէջ և աչքերս փակեցի:

Մի քանի ժամանակ լսում էր քանաքէպու երգը. «Քանաքէպու բարձր սարն ա, վայ լօ, լօ, լօ, վայ լօ, լօ, լօ» կանչում էր նա և յետոյ դարձեալ ամեն բան լռեց:

Երբ ես վերկացայ բաւական հեռաւորութեամբ ոչ ոք չէր երևում, միայն Զօրան մի քանի ոչխար էր ջրում դէպի այն կողմը, որ կողմը քանաքէպուն գնաց:

Բաւական ժամանակ նրան հետևում էի հայտնաբերել յետոյ վեր առայ հրացանս և գնացի դէպի սարերի ստորոտը, որտեղ յոյս ունէի զբոսնել կաքաններ, որոնք այդ ժամանակ քարափներից դաշտ են իջնում կերակրի համար: Մօտ մէկ ժամ թափառեցի, շատ կաքաւ ինձ պատահեց, բայց չը յաջողվեց ոչ մէկին սպանել:

Մէկ բլուրի մօտից որձ կաքաւի ձայն էր լսվում: Կամաց կամաց ես սկսեցի բարձրանալ սարը: Շունն պահում էի, որ գոնեա այս անգամ սպանեմ և մէկ բան ունենանք տուն տանելու: Հրացանիս ոտքերը բարձրացրած էին, երբ մէկը փշա քաշեց: Կա Տարիէլն էր, որ քարի ետեղ ծածկվել էր:

— Սուս, նստի՛ր, ասաց նա նայել էն կողմը, ցոյց տուցե՛ր նա սարի մէջ ձեռքը, տեսա՛ր: Փոքրիկ, կանաչով ծածկված տափարակ տեղ նստած էին քանաքէպուն և Զօրան: Նորա խօսում էին միմեանց հետ, չը կատարեցի որ մենք զրանց տեսնում ենք: Խեղճ սիրահարները սպանվ տեղ էին դառել, որտեղ կարծում էին նրանց

յետոյ իրանց ընտանեկան մէկ քանի հաշտները, դանան թիֆլիս, ուր հանգուցեալ օրիորդը կամենում է եղել սկսել նոր հանգիստ կեանք, շինել իր համար տուն, պարապել անտեսութիւնով: Այդ առանձնացած ահագին տան մէջ, որը գտնվում է Կուր գետի քարափայտ եղբայրն, բնակվելու է եղել իշխան Ներվալիձէի և երբեմն նրա Անդէկովկու կառավարիչ իշխան Չիտտուն իր կրտսեր եղբոր հետ, ունենալով տան միջ երեք ծառայ մէկ խոհարար, որին ընդամենը մէկ շաբաթ անցքից առաջ բերած է լինում Չիտտուն, Պէտրոս Կաթիսօնիա, մէկ տանու սպասաւոր Զուրաբ Քօրիձէ և մէկ դանապահ Նիկանէ Մէլաձէ:

Մայր և աղջիկ բաւականանում են այդ ծառաների սպասաւորութիւնով և մէկ քանի օրվայ համար չեն ուզում վարձել իրանց համար սեպհական ծառաներ կամ աղայիս:

Մայր և աղջիկ սովորութիւն են ունենում վերկենալ առաւօտը վաղ, փոքր ինչ պարապել տան անտեսութիւնով, յետոյ այցելում են իրանց մէկ քանի ազգականներին և ապա ժամի երկուսին գնում են ճաշելու: Եւրօպայի հիւրանոցը և այնտեղից դառնում են տուն և մնացած ժամանակը անց են կացնում տանը: Յուլիսի 22-ին անցնում են մի և նոյն եղանակով առաւօտը այցելում են իշխանուհի Փուճմանովին, որտեղ կենալու է լինում նրանցի տատը, շնորհաւորում են նրա ճննդեան օրը և հեռանալով այն տեղից նրա Անդրէկովկասի պայման է կապում իշխանուհու աղջկեանց հետ ըստ սովորութեան տեսնվել նրանց հետ երեկոյան 9 կամ 10 ժամին Կրուժօկի պարսպի մօտ, որը կից է Անդրէկովկասի բնակարանին: Այնուհետև աղջկեանց յետոյ Վերօպասում և դարձեալ այցելելուց յետոյ իրանց մի ազգականին, մայրը և աղջիկը դառնում են տուն: Այդ տեղ Կաթիթ Չիտտուայի հետ միասին նստում են տան առաջ ջրի եղբայրն և պարապում են խօսակցութեամբ: 7 թէ 8 ժամին, Կաթիթ

ոչ ոք չի տեսնի:

— Էն կողմը նայել, ցոյց տուցե՛ր ինձ Տարիէլը, էն մէկն էլ զրանց է մտիկ տալի:

Միւս կողմը Մադօի ջուրը չըբան էր, որ անդադար սեղմում էր իր խանդով կոթը:

— Աղա էն ջուրդն էլ է սիրում աղջկան, էսէնց էլ խաթարաւ կը լինի, ասում էր Տարիէլը ծիծաղելով:

Կանաչու վրա նստած երկար խօսում էին քանաքէպուն Զօրայի հետ: Մենք չէինք լսում նրանց խօսակցութիւնը, որովհետև շատ էինք հեռու: Վերջապէս քանաքէպուն վեր կացաւ, պատրաստվեց գնալու: Մօտ երկու րօպէ աղջիկը և տղան նայում էին միմեանց, յետոյ մէկը ընկաւ միւսի գիրկը: Հրացանի ձայնը արգելեց նրանց վայելել այն զրբախառնութիւնը: Նախանձոտ ջուրը չը հանքերեց, արձակեց իր հակառակորդի վրա հրացան և շտապ քայլերով հեռացաւ: Բաղաւորապէս բերդ գնտակը չը հասաւ նոպատակին, միայն խաղաղեց սիրահարներին աւելորդ րօպէ երջանիկ լինել: Նրանք շուտ բաժանվեցան և գնացին հակառակ կողմեր, անդադար յետ նայելով մէկը միւսի կողմը:

Այդ օրը ձայնի ժամանակ բոլորս դարձեալ հաւաքվեցանք Մադօի օդայում, բայց չը տեսանք ոչ Զօրային, ոչ ջուրը հովիւն: Ընկերներին որսը ինձանից աջող էր: Մասնօրը երեք կաքաւ էր սպանել, իսկ Միմօնը մի նապաստակ:

Մադօին շնորհակալութիւն անելուց յետոյ մենք գնացինք Երևան, որտեղ Մասնօրը դարձեալ խաբեց իր նանին, ասելով, որ եպիսկոպոսը եկաւ և ոչ թէ միայն ինքը ստացաւ նրա սուրբ օրհնութիւնը, այլ և պառաւ նանի համար էլ է բերել:

— Ապրես, այ որդի, ասում էր բարի կիւրը, ապրես, Աստուած գործիդ աջողութիւն տայ, իշխանաւորիդ իխտա աչքը բարի ըլի վրէ՛դ: Խեղճ նանի, կիթ գիտենայիր քնց ա քո ան առակը քեզ խաբում, նրա գլխի մաղերը կը հանէիր: Բայց դու քրտեղից կիմանաս, երբ այդքան քաղցր, բարի և միամիտ ես...

Մի քանի ամիս անցել է այն օրից, երբ մենք որսի էինք գնացել: Ես մտապեղ էի մեր որսն էլ, Մադօին էլ և միւսներին էլ: Ես ման էի գալի

Չիտտուն յայտնում է Անդրէկովկասին որ նա միւս օր առաւօտը պիտի գնայ Քուրայիս և տանի իր հետ իշխան Ներվալիձէի թողած թուրը, որի համար առանձին հեռագիր է ստացել և գնում է քաղաք իրը թէ մի քանի հարկաւոր իրեղէններ առնելու համար: Նրա հեռանալուց յետոյ գալիս է փոքր եղբայր Նիկոլայ Չիտտուն, որը գնացած է լինում իրը թէ ձիով մանկաբու և այդտեղ տերրասի վրա թէ՛ էլ խմում: Փոքր ինչ խօսակցութեանց յետոյ մայր և աղջիկ մնում են տուն և վերջինը սկսում է պարապել նամակագրութեամբ իր փեսային: Մի քանի ժամանակից յետոյ լսում են որ քաղաքում հրդեհ է պատահել նրանց դուրս է գնում նայելու և գտնում է այնտեղ Նիկոլայ Չիտտուային ծառաների հետ, նա կանչում է մօրը որ նմանապէս դուրս գայ նայելու հրդեհին, բայց մայրը չէ համաձայնում, նա պարապված է լինում կարով:

Նրան գառնում է տուն և շարունակում է իր նամակագրութիւնը, որը վերջացնելուց յետոյ մտաւորապէս 9 1/2 ժամին կամ զուցէ քիչ ուշ, փոխում է շորերը, վերցնում է մի ամբողջ մօմ, թողնելով սեղանի վրա այրվող մօմի կտորը, վառում է մօմը և դուրս է գնում սենակից յայտնելով մօրը որ գնում է վերցնելու խոհարարից իր կօշիկները որը տուել էր մաքրելու առաւօտը: Հազել թէ խեղճ օրիորդը հասնում է խոհանոցի դռանը, դռնում է մօմը դռան առաջ որ մօմէ, թափվում են նրա վրա պահած այդտեղ մարգասպանները, խեղդում են, յետոյ դիակը գցում են ջրի մէջ:

Իսկ խեղճ մայրը սպասում է աղջկայ դառնալուն: Անց է կենում մի ժամ, նա սկսում է վրդովվել լսում է կորիզօրում ոտքի ձայն, կանչում է Ջուրաբը, նրան պատասխանում են «себячас», բայց ոչ ոք չէ մտնում: Պառաւ աւելի շփոթվում է, դուրս է գնում սենակից և պատահում է Զուրաբին բորեկ ոտով:

Երևանի թողոտ, փոքրիկ այգիի մէջ, որ գտնվում է պոլիցիայի առաջ, Այդտեղ բաւական շատ մարդիկ էին հաւաքվել: Երբ ես հարցրի թէ թինչ խաբարն է, ինձ պատմեցին, որ մի քանի ժամանակ առաջ մի քանաքէպու էր անհետացել, որ նրան շատ էին պտուել, բայց ի դուրս, իսկ այսօր քանաքէպու դիակը գտել են Զանգուի մէջ:

— Ինչպէս երևում է քանաքէպուն ջրում չէ խեղդվել, ասում էր պատմողը, որովհետև նրա պարանոցի վրա թոկի հետքեր կան:

— Ոչինչ չեն խօսում, թէ ով կը լինի խեղդած, հարցրի ես:

— Ինչպէս չէ, ասում են, որ քուրդերն են խեղտել, մի քանի օր ծածկել են դիակը իրանց մօտ և յետոյ գցել են Զանգուս:

— Հա, միթէ, բացազանչեցի ես մտաբերելով Մադօի օդան, բայց ինչ են ասում ինչի համար կը լինեն սպանած, չէ որ մի շարժառիթ պէտք է ունենային:

— Պատմում են, որ քուրդերը սպանվածին փող են եղել պարտ և չեն կամեցել վճարել, հանդուցեալ պահանջել է և խեղդելով դրանից ազատվել են:

Այսպէս խօսում էինք, երբ մեզ մօտեցաւ Սամսօնը:

— Աղա էդ ինչ քանաքէպուն են սպանել, հարցրեց իմ ծանօթից:

— Տօ էն Կովկասից խեղճն ա, էն ինչ կորել էր է:

— Գիտես այդ ինչ խեղճն ա, դիմեց ինձ Սամսօնը, էդ էն քանաքէպուն ա, որ մեզ հետ Մադօի օդայում էր էն գիշերը, միտը ա:

— Ինչպէս չէ:

Խեղճ Զօրա, մտածում էի ես, զո սիրածին էլ սպանեցին: Ով է իմանում նախանձոտ քուրդ հովիւն էր սիրեկանիդ խեղդողը: Եթէ նա վճուցեց հրացան արձակել իր հակառակորդի վրա, միթէ չէր կարող խեղդել էլ:

Զօրային էլի մէկ անգամ պատահեցի, եթէ ժամանակ կունենամ մի ուրիշ անգամ կը պատմեմ նրա մասին:

—Նինան ուր է գնացել:
—Ձր գիտեմ, պատասխանում է Ջուրաբը, երեւի այդին կը լինի գնացած զբօսները:

Պատուը հրամայում է նրան գնալ միասին նրա հետ որոնելու Նինային: Ջուրաբը գնում է, հազնում է կոշիկները և հետևում է պատուին կարծես հակառակ իր կամքի: Նինան, Նինա կանչելով խեղճ պատուը սխուժ է փնտռել այգիում, բայց նրան ոչ ոք չէ պատասխանում: Ար է Նինայի շրջապատում, կանչել նրան, հրամայում է մայրը և նկատելով որ Ջուրաբը դժուարութեամբ է կատարում նրա առած հրամանը, մտնում է նրա հետ Նինայի սենեակը, որտեղ ճրագ չէ երևում և որը ձեռնում է թէ քնած է, բայց խիղջ դուռը բաց անելուն պէս վեր է թռչում տեղից և հետևում է Անդրեյի վախճանը: Ինչպէս կինը սխուժ է յուսահատելով, յանկարծ Դաւիթ Չիտուան հանում է գլուխը պատուհանից իր սենեակից, որը գտնվում է տան վերի հարկում և հարցնում է թէ ինչ է պատահելը և իսկոյն իջնում է ներքև: Պատուը յարձակվում է նրա վրա և հարցնում է թէ ուր է Նինան, և այդ ժամանակ նկատում է որ Չիտուան սաստիկ շփոթված է, որ նա դողում է: Սա պատասխանում է թէ երեւի զբօսներ է գնացել: Սկսում են միասին որոնել Դաւիթ Չիտուան ինչ որ ստում է մէկըրէրէն Նվան Մեղաձէին, սակ Ջուրաբը բռնում են պինդ պատուի ձեռները այնպէս պինդ որ, խոստովանում է յետոյ պատուը, մինչև այսօր ցաւում են ձեռներս: Փոքր ժամանակից յետոյ Չիտուան յայտնում է կարծիք թէ չը լինի օրիորդը շորերը թափ տալու ժամանակ ընկնում է գետը:

Գնում է նայելու այնտեղ յետոյ դառնում է և յայտնում է որ երեւի օրիորդը գնացել է լողանալու և խեղճ վեր է և Ջուրաբի հետ միասին իջնում են նեղ ցիխտու և ջրոտ քարաժայռ ճանապարհով դէպի գետը և դրանում են այնտեղ օրիորդի շորերը: Ահա եղևնազորութեան անցքի կարճատև պատմութիւնը պ. պ. դատաւորներ: Հինգ քննիչ հանգամանքները և տեսնիք թէ կարող էր արդեօք օրիորդ Նինան գնալ լողանալու գիշերով այդ ուշ ժամանակը, և գնալ այնպիսի ճանապարհով, որով ցերեկն անգամ դժուար և անկարելի է իջնել գետը: Դուք լսեցիք այստեղ պ. պ. Մէլքե-Բէդը լեարօի և Յինամզղարօի բերանից որ նոքա պոլցիայի սպասաւորների օգնութեամբ և իրարու ձեռք բռնած հազիւ թէ իջան այդ սաստիկ ճանապարհով: Դուք լսեցիք որ Նինան զարմանալու է եղել թէ ինչպէս են լողանում Կուրի նման կեղտոտ ջրի մէջ, Ջայանին, ամենահաստատ վիաներից մէկը, որը լաւ ճանաչում էր օրիորդի բնակարանը: Թիւր նա վկայում է որ օրիորդը Օրէսայում անգամ, որտեղ ամենայարմար բազմիներ կան լողանալու համար ծովի եզրերում, երբէք չէր գնում լողանալու, ուր մնաց որ լողանար այդ երկից Կուր գետի կեղտոտ ջրում:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԻՍԲԱԿՐԻՆ

Թիֆլիս մարտի 6

Անցեալ փետրվարի 24-ին յօդուտ Հաւաքարի սուրբ Մարիամնան օրիորդաց ուսումնարանի թատրոնական ներկայացումից դուրսը 232 բուրլ 60 կօպ. որից 112 բուրլ 98 կօպ. ծախքը դուրս գալով, մնաց զուտ արդիւնը 119 ր. 62 կօպ. Այս մասին յայտնում եմ իմ արտանց չորհակաւորութիւնը պատուելի պ. պ. մասնակցողներին, որոնք յօժարութեամբ յանձն առան օգնել յիշեալ ուսումնարանին, Բացի յիշեալ գումարը մեծ. Ս. Իւ...ից ստացվեց 12 բուրլ: Պարտք թէ և չէր իմացել, որ հայ ներկայացումն պէտք է լինէր և չէր եկել թատրոն, այնու ամենայնիւ պարտք էր համարել օգնել զործին, Սա մի հաղապարս

երկոյթ է, մանաւանդ մեր հայերիս մէջ: մինչդեռ մեր հարուստ աղաների համար օտարութիւն է համարվում հայ թատրոնը և կարծես, դեռ անթափանչ նրանք կամենում են հետու մնալ ազգային գործին օգնելու մասնակցութեանից, միւս կողմից օրքան միջիթարական է միւս տեսնել որ այսպիսի ազնիւ անձինք, ինչպէս Մեծ. Ս. Իւ...ն է, հանդէս են դուրս գալի և ինքնա-յօժար սիրով և զովանի առատաձեռնութեամբ, զգում են իրանց ջերմասիրտութեան լուսնի հասարակաօգուտ գործի զանձանակի մէջ:

Տեսուչ Ն. Աթանասեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱ

Կրօնական ազատութիւնը այն աստիճանի է հասած Ամերիկայի Միացեալ-Նահանգներում որ ամեն մարդ ազատ է այնտեղ իր կամեցած կրօնին հետեւել և կամ մի նոր կրօն տարածել միայն թէ ժողովուրդի հանդարտութիւնը և ընկերական կարգը չը խանգարուի: Վորմանական աղանքը որի հետեւողները բազմաթիւ կանայք են ունենում, սկսել էր շատ տարածվել Ամերիկայում, այնպէս որ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը փաստակար համարելով այդ աղանքի ամեն կողմ տարածվելը, բարոյականութեան պահպանութեան համար հարկաւոր եղած զգուշութիւնները արաւ, առանց կրօնական ազատութեանը զիպշելու:

Վորմանների վերջին մարզարէն Բրիգամ Ինզը արդէն մեռած լինելով, այժմ իր ժառանգները մէջ սաստիկ վէճ է ծագել և երեւի թէ վերջապէս դատ կը բանան իրար դէմ: Այդ դատը շատ հետաքրքրական կը լինի, որովհետեւ, բացի այլ տեղեկութիւններից, Բրիգամ Ինզի կանանց շիշդ թիւը կրնայ լինել: Ընդհանրապէս կարծում էին թէ Վորմանների մարզարէն միայն տաս և ինը կին ունէր, բայց այժմ իմանում ենք որ բողոք կանանց թիւը կը լինի քսան և հինգ որոնցից մի քանիսի որդիները միասին հաշվելով ժառանգների թիւը կը հասնի քառասուն և հինգի: Ասում են թէ Բրիգամ Ինզը ուզեցել է մինչև անգամ երեսուցի հասցնել իր կանանց թիւը:

«New York Herald» լրագիրը այս առիթով հրատարակում է մի շատ հետաքրքրական դոկումէնտ որի մէջ գրված են Բրիգամ Ինզի կանանց անունները, նրանցից իւրաքանչիւրի կենսագրութիւնով: Վորման քրիստոնեաների այդ մարզարէն առաջին անգամ ամուսնացել է Մարի Ինզի վրա որ ծնած է Նիւ-Նօրկ քաղաքում և 55 տարեկան է այժմ: Սկզբից սա ապրում էր Բրիգամ Ինզի հետ մի առանձին տան մէջ, բայց երբ մարզարէնի կանայքը շատացան, մի բուրլ վրա հիւրանոցի նման մի մեծ շէնք շինեց ուր բոլոր կանայքը իրանց սեփական բնակարաններ ունեցան: Այդ օրից սկսած, Մարին իրան նուիրեց բոլորովին իր հինգ որդիների դաստիարակութեանը:

Բրիգամ Ինզի № 2 կնոջ անունն է Լիւսի Սիլե որը ամուսնացած էր Իսահակ Սիլեի հետ և նրանից երկու զուակ էր ունեցել երբ գնաց հետևեցաւ Վորմանների աղանքին որոնք այն ժամանակ դեռ Նապոլում 1) էին բնակվում: Այդ քաղաքում նա բաժանվեցաւ իր բուն ամուսնից և ամուսնացաւ մարզարէնի հետ որից 8 որդի ունեցաւ: Բրիգամ Ինզի կանանցից մին էլ այդ Լիւսիի քոյրն է:

№ 4 կինն էր Հարիէտ Կուկ որ շատ ազատ խոսում էր մարզարէնի հետ և երբեմն մինչև անգամ նրան անհաճոյ բաներ էր ասում:

1) Նախքան քաղաքը իլլինոյսում էր որ հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներից մէկն է:

սում: օրինակ ասում էր թէ Վորմանների քաղաքը պարզապէս շարժանութիւն է, և այն: Բրիգամ Ինզը շատ վախենում էր իր այդ կնոջից: այնպէս որ երբ նրան տեսնում էր բարկացած, վախենում էր երևալ նրա աչքին և քաշվում էր իր սենեակը, մինչև որ նրա բարութիւնը հանդարտվէր:

Յիշեալ դոկումէնտի մէջ այսպէս շարունակվում է մարզարէնի կանանց կենսագրութիւնը մինչև № 25 կինը, Ամէլ Գուարդօն, որ վերջին կինն է: Ասում են թէ սա չը թոյլ տուեց որ մարզարէն այնուհետեւ մի ուրիշ կին էլ առնէր: Այնու ամենայնիւ, ասում են թէ, նա մտադիր էր ամուսնանալ շվէյցարացի մի աղջկայ վրա էլ որ եկել էր Միացեալ-Նահանգները և մի քանի կօնցէրտ էր սոււել Լակ-Սայէ քաղաքում: Բայց հէնց որ աղջիկը իմացել է Մարզարէնի դիտաւորութիւնը, սարսափած թողել է Վորմանների մարզաքաղաքը և շուտով փախել է:

Բրիգամ Ինզի կանանցից մի քանիսը բանաստեղծներ էին: Անուանի է մանաւանդ Էլիզա Մոսլը որ հիւսիսային բանաստեղծութիւններ է հրատարակած Վորմանների «Deseret News» լրագրում որ մինչև այսօր շարունակվում է: Նոյնպէս անուանի բանաստեղծ է Զինա Զէկօս անունով կինը որ իր ամուսնի հետ եկել էր Նուտահ բնակվելու, բայց այնտեղ բաժանվեցաւ իր ամուսնուց, Վորմանների քահանայութեան հետ ամուսնանալու համար: Իսկ միւսները բանաստեղծական հանձար չունեն, մինչև անգամ № 5 կինը մի պարզ աղանքի էր որի մարդասիրութեան վրա մարզարէն հիացած, իր կին առաւ: Ամուսնութեան արարողութիւններն էլ շատ պարզ էին լինում: № 18 կնոջ հետ որի անունն էր Էմմէլինէ Գորի, այս կերպով ամուսնացաւ: մարզարէն ձեռք տուեց նրան և սասց կնիմէլինէ, հաւանում է ք ինձ կին լինել: Այո, տէր, պատասխանեց նա. և այդքանով ամուսնական բոլոր արարողութիւնը կատարված եղաւ:

Բրիգամ Ինզը մարզարէնի բոլոր կանայքը բնակվում էին Լիւսի-Հաուզ հիւրանոցում որի մասին վերև խօսեցինք: Սենեակները մեծ էին և շքեղապէս զարդարված կարասիներով: Առաջին յարկում կային 14 բնակութեան բաժիններ (appartement), երկրորդի մէջ 21: Ստորերկրայ յարկում էին ճաշարանը, խոհարարներ, լուսարարներ, և այլն: Դահլիճը առաջին յարկումն էր:

Բրիգամ Ինզը վաղ առաւօտ վեր էր կենում անկողնիցը, հազնվում էր և ածիլվում: յետոյ ժողովում էր իր կանանց և որդիներին, աղօթք անելու համար: Աղօթելուց յետոյ՝ որ միշտ վերջանում էր երգեր երգելով, նախաձաշ էին անում: Մարզարէն բոլոր կանայքը միասին էին ճաշում մի մեծ սրահում ուր սեղանի զլիկն նստում էր մարզարէն: Տղայքը ճաշում էին կողմնակի դրված սեղանների վրա ուր իրանց մայրերն էլ կարող էին նստել, եթէ ուզեցային: Այս կանայքը զուցէ իրար նախանձում էին, բայց կերակուրի ժամանակ ոչինչ անկարգութիւն չէր երևում և ամենքն էլ վարվում էին իրար հետ իբրև ամենից աւելի միացած ընտանիքի անդամներ: Այնու ամենայնիւ, վերջին տարիներում մարզարէն զարդարեցած էր իր բոլոր կանանցով միասին ճաշելը: Այդ ժամանակ նա սկսաւ բաւականանալ մի շատ պարզ նախաձաշով: մի բաժակ կաթ էր ուտում, հացը թաթախելով Բրիգամ Ինզը գործնական մի մարդ էր: Երբ չը կարողացաւ շվէյցարացի օրիորդի հետ ամուսնանալ, որի մասին վերև խօսեցանք, նա ցաւում էր գլխաւորապէս, ոչ թէ մի կին կորցնելու, այլ Ֆրանսիերէն լեզուի մի ընտիր ուսուցիչ կորցնելու համար և միանգամայն մի ձրի ուսուցիչ իր աղջիկների համար: Նա իր բոլոր զաւակների համար մի գալլոց էր շինել իր բնակարանի ստորերկրայ յարկում: Իր կանայքը ունէին մի ուսուցիչ էր արժանութեան, մի ուսուցիչ պարի

և մի պրօֆէսոր Ֆրանսիերէն լեզուի: Երկուները այդ բազմաթիւ ընտանիքը ամբողջապէս դնում էր թատրոն ուր մարզարէնի կանայքը և որդիքը իրանց սեփական տեղերն ունէին: Մարզարէն իր վերջի օրերում, երեւի թէ ուղեց հրաժարվել այդպիսի մեծ բազմութեան մէջ կեանք վարելուց. նա իր կանանցից իւրաքանչիւրին տալիս էր մի մասնաւոր ազարակ (ֆէրմա) և տարեկան 1,000 դոլար եկամուտ: Իրա համար շինել էր ավել նաև մի տեսակ սրբավայր որ բնակարանի հետ հարցորակցութիւն ունէր մի գաղանի ճանապարհով միայն ուր արդիված էր ուրիշին մանկը: Վորմանների մարզարէն խաբում էր թէ այդտեղ իրան երևում էին տեսիլներ և թէ խօսակցում էր Ս. Հոգու հետ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Աթէնքից գրում են փետրվարի 13/25-ին, թէ վեց հարիւր կամաւորներ կարողացել են Վիստարա 4,000 հրացանով և 4 թնդանօթով: Ապստամբութիւնը ընդհանրացել է Եպիրոսի գլխաւոր նահանգներում: Ալբանիայի թիւրքերը միացել են ապստամբների հետ: Երեւի, Եպիրոսի նահանգում, Սէլինիկայում, 1500 ապստամբներ կուսեցան 3000 թիւրքերի դէմ: Ապստամբները յաղթեցին: Մեռեալների թիւը դեռ յայտնի չէ:

—Անգլիական պարլամենտում, փետրվարի 13/25-ին, լորդ Մանվեր հարցում լինելով թէ ինչ տարբերութիւն կայ կօնֆէրէնսի և կօնֆէրէնցիայի մէջ, լորդ Բիկօնսֆիլդ այսպէս է պատասխանել. «Չեմ կարող ձեզ բացատրել կօնֆերէնսի և կօնֆէրէնցիայի մէջ եղած տարբերութիւնը որովհետեւ ես ինքս էլ չը գիտեմ: Ընդհանրապէս կօնֆերէնս անուանում են այն դիպլոմատիական ժողովներ որ տերութիւնների կողմից ներկայ են գտնվում իշխանութեան գլուխ եղողները և կօնֆէրէնցիա անուանում են նրան ուր տերութիւնների կողմից ներկայ են գտնվում հաւատարմատարներ: Բայց ինձ երևում է թէ այդ տարբերութիւնը անտեղի է: Անցեալ դարվա սկիզբը Բաշտաղի կօնֆերէնսը եղած է որ հաւատարմատարներից կազմված էր: Կարող եմ ձեզ այլ օրինակներ էլ բերել, բայց բաւական կը համարեմ յիշեցնել շատ մօտ ժամանակ գումարված մի ժողով: 1856 թ.ին փարլումը գումարված կօնֆերէնս որ հաւատարմատարներից էր կազմված և ոչ թէ իշխանութեան գլուխ գտնվողներից:»

—Նորբնտիր պապը ինսպրոկթեան համար արձակել է Վատիկանում պաշտօն ունեցողներից շատերը որով սկսել է շատերի առեւտրութիւնը և թշնամութիւնը գրգռել իր դէմ:

—Փարիզում Լըբրե-Բօլէի գերեզմանի վրա մի յիշատակարան են կանգնել հանդիսաւոր կերպով: Յիշատակարանի երեսին որի վրա բարձրացած է Լըբրե-Բօլէի արձանը, այսպէս է գրված. «Լըբրե-Բօլէն»: Նա ազգու կերպով օգնեց 1848-ի հանրապետութեան աջողվելուն: Իբրև միջնորդները գործերի, նա կարգաւորեց ընդհանուր բուէարկութիւնը (suffrage universel) 1807—1874: Հանդէսին ներկայ են գտնվել Լուի-Բլան, Կարնօ, Կրէմիէ և Գարնիէ: Պապէժ, հանգուցեալի պաշտօնակիցները առժամանակեայ կառավարութեան ժամանակ:

—Վօլֆի Հեռագրական Բնկերութիւնը Աթէնքից հաղորդում է մարտի 10-ին (փետրվարի 26-ին) որ Կրիտէի ապստամբները թիւրքաց կառավարութեան առաջարկութիւնը զի նախադարձի մասին ընդունեցին: Նրանք կամենում են սպասել թէ ինչ հետեանք կունենայ կօնֆերէնսը և նայելով հանգամանքներին, թշնամական գործողութիւնները կամ նորից կսկսեն և կամ բոլորովին կը զարդարեն պատերազմը:

—Հուսից հաղորդում են փետրվարի 26-ին որ ամերիկական կարդիտալ Մակ-Կոսկին ներկայանալով պապին, սասց որ ինքն չէ ցաւում որ չը կարողացաւ ներկայ լինել կօնֆերէնսի որովհետեւ Սրբազան Ժողովը ամենապաւ ընտրութիւն է արել: Հաւատացնում են որ պապը իր թագադրութեան օրը մտադիր էր իր պապի բոլոր բարձր պաշտօնները տալ իրան հանձնել մարդկերանց: Վատիկանում բնակվող բոլոր կանայքը հրաման ստացան հեռանալ իրանց բնակված տեղերից:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԳՈՒՐՈ ԵՎԵՒ ՄԵՄՈՒԼԻ ՏԵԿԻՑ

1. ԱՂՕԹԵՏԵՏԻՐ. — աշխատասիրութիւն 'Ն.

Տէր-Յակոբեանց, գինն է. 7 կոպէկ

2. ՍՐԲԸՉԸՆ ՊԵՏՄՈՒԹԻՒՆ 'ՆՈՐ-

ԿՏԵԿԵՐԸՆԻ Պ. Սիմեօնեանցի գինն է 60

Գումարով առնողներին զեղումն կը լինի:

Հրատարակութիւնը ԿՈՎ ԿԵՍԵԸՆ ԻՐԱՎԱ-

ՃԱՌՆՈՅԻ ԶԼԲ. ԻՐԻԳՈՐԵԱՆՅԻ

1-4

Կառավարութեան թղթաւթեամբ այս փետրվար ամի 18-ից բացվեցաւ ՔԻՖԼԻՍԻՄ, Միջոցեկան կամուրջի վրա, Միրզոլի տանը № 1, 2, նոր գրականութիւն «ԿԵՍԵՐՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՆՈՅ» (Центральная книжная торговля) անունով: Գրականութեան վաճառ- վիքը եւ անհատական դասագրքեր հայերէն, ռուսերէն և ուրիշ լեզուներով: Նոյնպէս լինելու է մեծ ընտրութիւն ընթերցանութեան գրքերի: ԳՐԱՎԱՃԱՌՈՒԹՅՆ ԿԱՍՏԱԿ ՈՒՆԻ ԻՐ ԶՅՈՒՄԻՆԱՄԻ Ե ԶԵՆՈՒՄՈՎ ԿԱՃԱՌԱՄԵՐ ԿՐԹԱԹԵԱՆ ԳՐՈՒՄ, մասնաւորապէս մեր հայ ուսումնաս- րաններին: ԳՐԱՎԱՃԱՌՈՒՄ ԿՐ ԾԱԽԼԻՆ ՆՄԱՆԱԿԵԱ ՍԵՂԱԿԱՆ ԿԱՐԵՐԱԿԱՆ ԹԻՐԹԵՐԸ: Պատւէրները կը կատարին ամենայն արագութեամբ: Անիող պատւէրները, մասնաւոր ան- ծանօթ տեղերից, անկատար կը մնան: Օտար քաղաքացիք կարող են գիմել այս հասցեով Թիֆլիս Կենտրոնական-книжная торговля Михайловский Мостъ, домъ Мирзоева № 1, 2.

4-10

ԵՂՅԱՐԲ Ե. Գ. ՏԵՐ-ԳԵՈՐԳԻՆԻԱՆ Ս. ՏԵՐ-ՆՍՐԱՅԷԼԻԱՆ

ԼԱՄՊԱՆԵՐԻ ԵՒ ՆԱԻԹԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

Որ գտնուում է Գոլովնակի պրոպակի վրա Բելի տանը, ստացվել է մեծ քանակութեամբ. նաև թ. առաջին տեսակից Բազուի առանցիկ- կարգ դրժարաններից: Ծախվում է ֆունտը 13 կոպ., որ քաշի և գին ճշգրտված ապագուցա- նելու համար տալիս ենք վկայագրով (կիլ- տանցիկ): Ընդունում ենք նոյնպէս հասցնել զանազան պաշտոնական տներում, կաղարկե- ռում, ուսումնարաններում պակասաւոր գներով, վճարք ամսուայ վերջը ստանալով: Խանութում գտնուում է շատ տեսակ ԼԱՄՊԱՆԵՐ Ե ԼԱՄ- ՊԱՅԻ ՊԱՏՎԱՆԵԼԻՔՆԵՐ, որոնց լաւ յատկու- թեան համար պատասխանատու ենք: Ծախվում են աւելի ԱՐԺԱՆ ԳՆԵՐՈՎ, թան թէ առաջ: Ա. Լիլիարեանց

Մէկ երիտասարդ դանկանում է ունենալ անե- բում ՄԱՆՆԱԻՐ ԳԱՍԵՐ Պատրաստում է նոյն- պէս զինազգայի ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԻ և ԵՐ- ԲՈՐԻ քասատունների համար Հասցէն կարելի է խմանալ «Մշակի» խմբագրատանը

Молодой человекъ желаетъ имѣть частныя уроки. Приготовляетъ дѣтей въ первый, вто- рой и третій классы гимназій. Адресъ мож- но узнать въ редакціи „Мшакъ“.

7-8

Въ книжномъ магазинѣ Ушиарова продается книга и описание древностей города Тифлиса, соч. Платона Юсселиани. Цѣна 50 к.

Ուշիարովի գրքերի խանութում ծախվում է «Թիֆլիսի հնութիւնների նկարագրութիւնը» հեղ. Պլատոն Իոսելիանի, գինը 50 կ.: 4-4

ՔԻՖԼԻՍԻՄ Մասնաժողովը յօգուտ թիւրքիա- ից զէպի Անդրիովիս գաղթականների յայտ- նում է որ յօգուտ կարօտեալ գաղթականների ընդունվում են ամեն տեսակ հին և նոր շորեր: Պահեստը դառնում է Արծրունու քարվան- սարայի մէջ: Նուիրատուները թող բարեհաճեն բերել կամ ուղարկել իրանց այդ նուէրները նախկին խանութի այժմ Զոյհանիրեանի ըն- թերցարանը, Կոլբոցովի փողոց: Արծրունու տուն, որտեղ և կը ստանան սպված ստացականներ իրանց ընծայաբերութեան համար. 14-20 (1)

ՔԻՖԼԻՍԻՄ Մասնաժողովը յօգուտ գաղթա- կանների յայտում է որ, գրամական նուիրա- տուութիւնները յօգուտ գաղթականների ընդուն- վում են «Մշակ» և «ԽՊՔ. ՅԵՏԻ» լրագիրների խմբագրատան մէջ: Նոյնպէս ընդունվում են գրամական նուիրատուութիւնները և պ. Չի- թախովի կանտորայում, Շաղիօվի քարվան- սարայում, (Բաղադկանի ետև): 14-20 (1)

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМЪ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ ОТЪ 9 ЧАСОВЪ УТРА ДО 2 ЧАСОВЪ ПОПОЛУДНИ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆՅԻ ԳՐԱՆԵՆԵՍԿԸ

ԲՆՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԼՈՒԵՒՕՏԵԸՆ 9 Ժամից մինչև 2 Ժամ կէտորից յետոյ բացի ԿԻՐԿԿԻ օրերից:

Լոյս տեսաւ «ԱՌԱՋԱԿ ՕՏԵՎԻ ԳՈՐԾՔԵՐԸ» կամ «Հայրը ցանց, որդին հնձց» անունով բրօշուրան: Գինն է 10 կոպ: Ցանկացողները կարող են գիմել հետեւեալ հասցեով: Թիֆ- Լիս, Вильгельмъ Гроссѣ, Столярная фаб- рика Ф. Зетцера, въ колоніи. Մենք ինք- ներս խոտովանվում ենք, որ մեր այս առա- ջին աշխատութիւնը թերութիւններ կունե- նայ, որովհետև որպէս անփորձ երիտասարդ շտապիցիներ շուտով լոյս ընծայել: Պատրաստ ունենք մի գրքիչ «ՈՐԻ ԳԵՆՈՐԻ ԶԱԿԱՏԱԳԻՐԸ» վերնագրով: Եթէ մեր նիւթական մի- ջոցն էրը կը ներեն, այդ ևս կը նուիրենք հայ գրականութեանը: 2-8

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԵՒ ԶԱՌՈՒԹԱԿԱԶ Փորձված վաճառականական գործերում, գիտէ կարևոր լեզուները, ցանկանում է տեղ ունե- նալ, թէ վաճառականի մօտ և թէ ուրիշ ծառա- յութեան մէջ: Պատրաստ է և քաղաքից դուրս ծանաղել: Հասցէն. «Մշակի» խմբագրատանը:

ПРИКАЗЧИКЪ

Опытный, какъ по операционной, такъ и по письменной части. Знаетъ необходимыя языки, ищетъ мѣсто, согласенъ и на выѣздъ. Адресъ: Редакція газеты „Мшакъ“ 4-5

ԱՐՏԱՍԱՀ ՄԱՆԻՑ ՆՈՐ ՍՏԱՅ- ՎԵԼ ԵՒ ՊԱՐՏԻՂԻ ԲՈՑՆԵՐԻ ԵՒ ՏԱԳԻԿ- ՆԵՐԻ ՍԵՐՄԵՐ, որոնք ծախվում են Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան կոմիտիոնի կարգէի դէպքում, որ գտնուում է Գոլովնակի պրոպակի վրա № 11: 2-10

Մէկ Սապօր օֆիցեր ֆնՏՈՒՄ Է ՊԱ- ՐԱՊՄՈՒՆԻ (գծեր և պլաներ շինելը դասեր տալ): Հասցէն հետեւեալն է: Ար- տիլերիսկայնա փողոց, Յարութիւնովի տուն, զինուորական Գիննազիայի զէմ, առաջին յար- կում: 2-3

Table with multiple columns containing financial data, including 'ՄԱՐՏԻ 9', 'Տ Ե Գ Ե Կ Ա Ց Ո Ւ Ց', and various numerical entries under different categories like 'ՔՐԻՖԼԻՍԻՄ' and 'ՓՈՒԹ-ՔԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԼ-ԹՈՒՂԻ'.